



ԲԱԶՄԱՎԷՊ

ԺԶ ՏԱՐԻ, ԹԻԻ 12.

1858

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1.

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՈՒՄԱՐԱՆԻՆ

ԱՇԱԿԵՐՏԱՅ

ՏԱՐԵԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Ազգի մը ճշմարիտ և հիմնական յառաջագիմուժեան աղբիւրը շատ իրաւապէս ըսուած է որ ազգային վարժարաններն են, վասն զի հոն կը բովանդակուին ազգին ապագայ ակնկալիքը. մարդկութեան մանկութիւնը կը նմանի բուսոյ մը որ որչափ խնամօք դարմանուի՝ այնչափ ալ առատապէս կը պտղաբերէ. և մանկութեան սիրտն ուրիշ բան չէ՝ բայց եթէ դաշտ մը դեռ ևս անմշակ այլ կոյս երկիր, որ և ենթակայ է թէ՛ բարւոյն և թէ՛ չարւոյն բուսաբերութեանը. ճարտար ձեռաց միայն կ'իյնայ գիտնալ գշարն իւրին և զբարին աճեցընեն:

Վարժարաններուն օգուտն կրկին է, մէյ մը առանձին աշակերտացն և մէյ մ' ալ ազգին ընդհանրութեանը վրայ ըրած փոփոխութեամբը. յաշակերտան՝

կրթուելով, այլոյն ալ՝ ի կրթելոյն օգտուելով և կամ նոցա բարի նախանձիւքն քաջալերուելով և անոնց հետեւելով: Եւ յիրաւի քանի որ այս բարի նախանձը կայ ազգի մը մէջ՝ անոր յառաջագիմուժիւնն անտարակուսելի է. վասն զի ի նմին կը բովանդակուի հաստատուն և ուղիղ բարեպաշտութիւնը, ճշմարիտ սէրն առ միմեանս և բարւոյն ճանաչողութեան անմուտը կամքն. և չեմք սխալիր ըսելով որ ասոնք են ամենայն կիրթ ընկերութեանց հաստատուն կապերն: Եւ յս խորհրդածութիւն ըրինք մենք ալ այս մօտերս երբոր ըստ սովորութեան՝ վարժարանիս մէկ ընտանեկան և միանգամայն ազգային հանդէան կատարեցինք, ետ դառնալով մէյ մը և անցած տարւոյն մէջ մեր սիրելի աշակերտացը ջանքն և աշխատութիւնը

վարձատրելու համար ըրած քննութեամբը : Արնանք ըսել 'ի պատիւ և 'ի քաջալերս աշակերտաց և յուրախութիւն իրենց ծնողացը և մեզ՝ որ գոհ ըրին իրենց վարժապետները թէ իրենց բարի վարուքն և թէ ուսումնասիրութեամբը : Ըրդէն մէջերնէն առաջին դասն՝ ութը հոգի, իրենց ուսումնական ընթացքը լմնցած ըլլալով, օգոստոսի 23^ն վարժարանիս ուրիշ հանդիսի մը օր՝ այսինքն աշակերտաց երրորդ եռամեայ բարի վարուց և ուսման միտալաց բաշխման օրն վերջին անգամ ներկայացան վարժարանիս բարեկամաց և վարժապետաց դիմացը ընդունելու անոնցմէ և իրենց ընկերակիցներէն ուրախակցութեան մաղթանքներն և վերջին հրաժարման ողջոյն . և արդէն անոնցմէ չորսն՝ Պ. Թովմաս Հասունեան, Պ. Յովսէփ Տէրգաւթեան, Պ. Պօղոս Պէշիքթաշեան և Պ. Պօղոս Խնձիճեան մեկնեցան իրենց հայրենիքը առ 'ի ըսու ծնողայն և իրենց վեցամեայ կարօտը . միւս մ' ալ՝ Պ. Ընտոն Պոյաճեան քաղքիս մէջ իր ազգականաց քովն անցաւ . մեկնեցան ասոնք նախանձաւոր ձգելով իրենց աշակերտակիցքը իրենց շաւղին հետեւելու և ջանալու զանոնք գերազանցելու ևս, որով է ազգին յառաջադիմութեան միակ և հաստատուն յոյսն : Իսկ իրենցմէ մին Պ. Սիւնի Վապարաճեան վիմագրութեան արուեստն՝ որ շատ յաջողութեամբ ուսաւ՝ և ևս կատարելագործելու համար դեռ ևս կը մնայ առ ժամանակ մի, և միւսն Պ. Սիւնի Վապարաճեան Երկրագործութեան պիտի պարապի () սմանեան տէրութեան ծախիւքը . այս առթիւս չենք կրնար չյայտնել մեր շնորհակալութիւնը առ Յակոբ Աֆէնտի Առճիկեան Բարիզու () սմանեան գեսպանատան առաջին խորհրդականն որուն ազգասիրական ջանքն վերոյիշեալ պատանին այս շնորհօ ընկալաւ : Վարժարանիս ուսումնական ընթացքին մէջ կը մնայ միայն միշտ 'ի բարեկրօն վարս և յուսմունս առանձին գովութեան արժանի

եղած պատանին Պ. Սիւնի Վապարաճեան, որն որ փափաքեցաւ դեռ ևս մնալ տարի մը իր առանձնական ուսմունքներն կատարելագործելու համար : Իսկ հոկտեմբերի 23^ն կատարուեցաւ մնացած կրկին դասուց պարգևաբաշխութեան հանդէսն : Վարժարանիս սրահներուն մէկուն մէջ շարուած էին աշակերտաց հայերէն, գաղղիարէն, անգղիարէն շարագրութիւնները, տաճկերէն գեղագրութիւնքը, հաշուետուամարի փորձերն . ուրիշ սրահի մէջ ալ զանազան նկարներ, որոնց մէջ մասնաւոր մտադրութեան ու գովեստի արժանի էին Պ. Սիւնի Վապարաճեանին և Պ. Յովսէփ Տէրգաւթեանին վիմագրութիւնքը և Պ. Պօղոս Պէշիքթաշեանին կալվանաձոյլ գործուածքները : Վախագահ բազմեցաւ հանդիսիս Արքայան քահանայապետին երեսփոխանն . հանդիսակից հաճեցաւ ըլլալ և 'ի հայրենեաց պանդխտեալ վսեմափայլ Տիւզեան Սիւնի Պէյն, որն որ ճանապարհորդութե պատճառաւ նոյն օրերս Բարիզ կը գտնուէր իւր ամուսնովն . հրաւիրելոց դասէն էին Տիւզեան մեծապատիւ Յովհաննէս Չէլէպին, ազնուամեծար Առճիկեան Յակոբ Աֆէնտին և ուրիշ բազմաթիւ ազգային և գաղղիացի պատուաւոր և ուսումնական մարդիկ : Վարժարանիս ուսմանց յարգոյ Տեսուչն բացաւ հանգէսը համառօտ ատենախօսութեամբ՝ յորում կը ցուցնէր թէ ինչպէս դաստիարակութիւնը ազգերնուս վրայ յեղափոխութիւն ըրած է մանաւանդ այս յառաջադէմ դարուս մէջ . և թէ ինչ երախտագիտութիւն պէտք է ունենալ Ամուսնի Սուրատայ, որ իւր չքնաղ ազգասիրութեամբը սատար եղած է այս մեծ յեղափոխութեան : Շնորհակալ եղաւ գերապատիւ Վախագահին, վսեմափայլ Պէյն և բոլոր հանդիսականաց որ պատուեցին և քաջալերեցին զվարժեալսն և զվարժիչ իրենց ներկայութեամբը : Սրբանակաց բաշխման վերջը, յորում մի առ մի աշակերտաց վարուց և ուսման աստիճանները

կարդացուելով՝ հանդիսականաց ձեռքէն
 ընդունեցան իրենց արժանեաց պսակը ,
 գերապատիւ Վախագահ Տամառօտա
 պէս պատասխանեց ուսմանց հետջին
 խօսքերուն և յորդորեց զմանկունս ՚ի
 ճշմարիտն աստուածպաշտութիւն , որ
 է հիմն և առաջնորդ ընկերական կե-
 նաց , միջոց առնելով զուսմունս հաս-
 նելու այն ծայրագոյն իմաստութեան որ

է Վստուած . յիշեցուց իրենց պարտքն
 որ ունին առ մեծ երախտապարտ Վա-
 րերար վարժարանիս և առ Սուսցիչն
 իրենց բարելաւութեամբն և ուսումնա-
 սիրութեամբը , և քաջալերեց որ իրենց
 ջանքն աւելցնեն և ևս յառաջանալու
 մնացած սորվելիք ուսմանց տարինե-
 րուն մէջ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՒՆ

ՍԱՐԳԵՆԻ

Շիղ սարդենուց երբեմն ի հող հարրստեալ
 Լը զջգ յերկինս աղերս արկի ես խոնարհ
 Օ ի աճեսցէ մատաղ թրփիկն օդապար
 Ի զարդ ապա երգաբանից եւ ի փայլ .
 Լը զոսկի թեւսն ի Օ եփիւռէն ես հայցեմ
 Սըփուել ըզգուարթ ոստովքն ի կէս ապրիլի .
 Լը կաշկանդեալ ի պարաւանդս ուժգնակի
 Խիստ հիւսիսակ՝ մի անցուցէ ինչ դըժխեմ :
 Գիտեմ զի տունկրս , դից փեբեայ սիրական ,
 Յուշիկ աճէ , շատ իսկ յուշիկ ի հասակ
 Լը յոց բնաւից որ յարեգդէմ յերկրիս կան .
 Լը ընդ յամեխն երկայն զիս ոչ վըշտագնէ ,
 Օ ի եւ ի մեզ արժանաւորն ի պըսակ
 Բեճաւ ճըգամբ եւ յամրագոյն իսկ յառնէ :

ՄԷՆԾԻՆԻ

ՅԱՂԲԵՐԱԿՆ

Բըբիւր զեղուն ու անապակ
 Օ եփիւռից վայր ընտանի ,
 Լըոյ մըրմունջդ անուշակ
 Հառաչանաց նըմանի ,
 Ս՛հ , զի սիրուն է բլուրն այն ,
 Որ քոց յալեաց արծաթի
 Լընու զպըճնանս իւր համայն .
 Օ ի հեշտ անդոյրն անտառիկ ,
 Լըր ի շինից գամ հեռի
 Հանգէլ յըստուեր զովացիկ :